



**ԽԱՎԵՐՅԱՆԻ ԵՎ ԱՆՎԱՋՐԵԱՆԻ  
ԿԵՆՏՐԱԼՆԵՐԻ ԿՈՄԵՏԵՍՆԵՐԻ  
ՄԻ ԼՈՒՆԵՐԾՎՅՈՒ ԼՈՒՇՈՒՄԸ**



այ նորագույն գրականության հիմնադիր և Արուսյանի կենսագրությունը հարուստ է առեղծվածներով, իսկ նրա ծննդյան և մահվան շուրջը ժամանակի ընթացքում մի շարք լեգենդներ են հյուսվել:

Այդ առեղծվածներից մեկն էլ կապված է Արուսյանի ամենամտերիմ դասընկեր Սեփանոս Նազարյանի անձնավորության հետ: Ստույգ վավերագրերի բացակայության պատճառով Արուսյանի և Նազարյանի ամենատաղիմ կենսագրությունն անգամ չի հաշուդրվել ճիշտ մեկնաբանել այդ առեղծվածը:

Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվում իմ կողմից կատարված պարզապատմաների հետևանքով հայտնաբերվեցին մի քանի նյութեր, որոնք լիովին լուսաբանում են այդ առեղծվածը և վերաբերում են Ստ. Նազարյանի մինչև դորպատյան շրջանի, մեզ հետաքրքրող 1829—1832 ժամանակամիջոցն ընդգրկող տարիների, կյանքին ու գործունեությանը, որ տակավին ծածկված էր մթության ջրոցով:

Բայց նախքան այդ խնդրի լուսաբանման անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ կերպով տալ այս երկու մտերիմ դասընկերների ուսուցման սկզբնական տարիների ընկերակցության, միմյանցից բաժանվելու, ինչպես և Դորպատ մեկնելու հանգամանքները:

Նրանք առաջին անգամ իրար հանդիպել ու ծանոթացել են 1822 թվին, Քիֆլիս քաղաքի Տափի թաղի մի մուլի խցում, ուր գիտնականի մեծ համբավ ու հռչակ վայելող Ղարաբաղցի Պողոս վարդապետը իր շուրջը հավաքելով մի խումբ ուսումնածարավ պատանիների, պարապում էր նրանց հետ:

1824 թվին բացվում է Ներսիսյան հոգևոր դպրոցը և երկու ընկերներն էլ փոխադրվում են այնտեղ: Նրանք միասին սովորում են մինչև 1826 թվի փետրվարի 24-ը, այնուհետև Արուսյանը երրորդ դասարանի ավարտական վիճակի ստանալով թողնում է Ներսիսյան դպրոցը, իսկ Նազարյանը մնում է նոր բացվելիք շորթորդ Եհնդեբորդ դասարաններում իր ուսումը շարունակելու համար:

Ներսիսյան դպրոցը թողնելուց հետո Արուսյանը տեղափոխվում է Էջմիածին, ուր մնում է շուրջ երեք տարի, մինչև հնարավորություններ են առեղծվում նրա համար Էջմիածնի կաշկանդիչ մթնոլորտը թողնելու և գիտության ու արվեստի անընդգրկելի ոլորտներում արժվաթոխք սլանալու:

1829 թվի սեպտեմբերի 7-ին, Արարատի գագաթը բարձրանալու համար, Էջմիածին է ժամանում Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը: Էջմիածնի այդ ժամանակվա միաբանության անդամներից քիչ թե շատ ուռաներ են միակ իմացույր հանդիսանում էր ևս. Արուսյանը: Արարատի գագաթը բարձրանալու համար պրոֆեսորի խնդրանքով նվիրեմ կաթողիկոսը ևս. Արուսյանին կարգում է որպես ուղեկից ու թարգման: Այս պատեհ առիթը հնարավորություն է տալիս Արուսյանին, մոտիկից ծանոթանալու ու մտերմանալով Պարրոտի հետ, հարտնելու նրան իր սրտի միակ բաղձանքը, բարձրագույն կրթություն ստանալու ջերմ փափագը: Պարրոտը խոստանում է միջնորդել, որպեսզի նրան ընդունեն Դորպատի համալսարանում պետության հաշվին սովորելու համար: Հայտնի ճանապարհորդ Մորից Վազնեբը հետևյալն է գրում այս մա-

սին. Պր. Աբովեան էջմիածնի վանքին տիրացուներէն մէկն էր ու քահանայական վիճակի որոշուած էր: 1829-ին Տորբաղեան համալսարանին վարժապետ պր. Բարրոդ իր Հայաստան ըրած ճամբորդութեանը մէջ էջմիածնի վանք ալ տեսնելու երթալով Աբովեան պատանեակը միայն գտնուեցաւ վանքին մեջ, որ ռուսերէն կիօսէր: Բարրոդ կաթողիկոսին աղաչեց, որ այս երիտասարդ սարկաւազը իրեն ճամբորդութեանն ընկեր ըլլայ: Կաթողիկոսը Տորբաղեան համալսարանին վարժապետին աղաչանացը զիջաւ: Աս երկու ուղեկիցիները եղբօր պէս իրարու հետ կապուեցան. ամեն դժուարութեանց ու վտանգներու մէջ իրարմէ չէին բաժնուէր. ու աս կերպով ստացած բարեկամութիւնը մինչև Բարրոդին մահը տևեց: Պր. Աբովեան Բարրոդին գիտութիւնը տեսնելով՝ ինքն ալ դիտութեան եռանդ մը ստացաւ. ու անոր շատ կաղաչէր, որ զինքը Տորբաղ դրեկելու միջոց մը գտնէ, որպէսզի հոն տեղաց համալսարանին մէջ ուսում ու գիտութիւն սովորի և կրթուի: Ինչ և իցէ Բարրոդին ձեռք բռնելովը բաղձանքին հասաւ: Ռուս կառավարութիւնը օգնութիւն ընելով՝ պր. Աբովեանը Տորբաղի համալսարանը մտաւ\*):

1829 թվի դեկտեմբերի 4-ին Աբովյանին հաջողվում է ստանալ կաթողիկոսի թուլլտվութեան կոնդակը, իսկ հինգ օր հետո նաև մեկնման ուղեգիրը: Այս նախապատրաստութիւնները տեսնելով նա անհամբեր ըստացաւ էր Պարրոտի պատասխանին:

1830 թվի ապրիլին վերջապես ստացվում է նրա բարեբար Պարրոտի երկար սպասված նամակը: Այս նամակով Պարրոտը հայտնում էր, որ Աբովյանի ցանկութիւնը կատարված է արդեն, որ իր միջնորդութիւնը հարգվել է թե՛ Կովկասյան փոխարքայի և թե՛ Լուսավորութեան նախարարի կողմից, որոնք հաճութեամբ ընդունելով իր խնդրքը, թուլլատրել են Աբովյանին Դորպատի համալսարանում պետութեան հաշվին սովորելու:

1830 թվի մայիսին ստացվում է նաև Կովկասի փոխարքա գրաՖ Պասկևիչ—Նրևանսկու հրամանագրի պատճենը Աբովյանի Դորպատ մեկնելու և սովորելու թուլլտվութեան մասին:

Վերջապես 1830 թվի հուլիսի 11-ին, Աբովյանը հրաժեշտ տալով Թիֆլիսին, ուղեվորվում է իր նպատակավայրը: Իր ուղևորութեան ընթացքում նա մի քանի օր մնում է Նոր—Նախիջևանում. ապա շարունակելով

իր ճանապարհը՝ Մոսկվա է հասնում օգոստոսի 18-ին. այստեղ երեք օր շրջագայելուց հետո ուղևորվում է Պետերբուրգ, որ հասնում է օգոստոսի 25-ին, վաղ առավոտյան: Աբովյանը իրեն հարկավոր մարդկանց հետ տեսնվելու ու իր գործերը կարգի բերելու համար մեկ-երկու օր էլ մնում է Պետերբուրգում: Օգոստոսի 26-ին նա թողնում է կայսերանիստ մայրաքաղաքը և սեպտեմբերի 3-ին հասնում է իր երազավայր Դորպատ քաղաքը:

Աբովյանն իր ճանապարհորդութեան իշխվայրերում հանդիպում ու ծանոթանում է մի շարք մարդկանց հետ, որոնց մասին մանրամասն հիշատակութիւններ է արել իր «Հիշատակարան»-ում: Նրա հիշատակած անձնավորութիւններից մեկը հետաքրքրում է միայն մեկը, որի ով լինելու մասին, ինչպես Աբովյանի, այնպես էլ Նազարյանի կենսագիրները տվել են միմյանց հակասող և ոչ ճիշտ մեկնաբանութիւններ: Կենսագիրների այդ հակասական և ոչ ճիշտ ենթադրութիւնները կապված են Աբովյանի պետերբուրգյան «Հիշատակարան»-ի առաջին էջում հիշատակված ոմն Ստեփանոսի անվան հետ: Ստորև բերում ենք Ստեփանոսի անվան հիշատակութեան վերաբերյալ հատվածը.

1830 թ. 25 օգոստոսի Ս. Պետերբուրգ

Սիրելի Առաքել

... Երեք ժամից հետո ազգային սերն ըստիպեց ինձ գտնել իմ ազգակիցներին. սրտիս մեծ հաճութեամբ գտա առաջինն իմ սիրելի Ստեփանոսին, որ բարեկամ էր ինձ մանկութիւնից, բայց որովհետև նա ծառայում էր կորպուտում Ե Միխայիլով գամկէն», ուստի շկարողացավ նույն ժամին ընդունել ինձ, այլ անչափ կարտած սրտերիս իրար տեսնելու ուրախութիւնից, խոստացանք հանդիպել երեկոյան: Նա բնակվում էր տիրացու Հովսեփի ավաղ սարկավազի մոտ... Սիրելի Ստեփանոսը ինձ տարավ նաև թուրքոն, — ներկայացումը մեծ տպավորութիւն թողեց իմ վրա և այլն\*):

Խաչատուր Աբովյանի կենսագիր Ներսես Տեր-Վարապետյանը, կառչելով Ստեփանոս անվան լոկ հիշատակութեանը, կարծել է, որ «Ստեփանոս սիրելին, բարեկամ է մանկութեանը» հանդիսանում է ոչ այլ ոք.

\*) Մ. Վազներ «Ճանապարհորդութիւն ի Հայաստան», թարգմ. Փ. Զամէնան, Վիլննա 1851 թ., էջ 1—2:

\*) Երվանդ Շահադեզ, Դիվան Խաչատուր Աբովյանի, 1940 թ. Երևան, էջ 295-297:

քան Աբովյանի մտերիմ դասընկեր Ստեփաննոս Նազարյանը, բայց թե ի՞նչպես և ե՞րբ էր վերջինս ծառայության մտել «ի Միխայիլով դամկէն», այս մասին նա, իսաստեր շունենալով, լռում է:

Ստեփանոս Նազարյանի կենսագիր Լեոն, իր երկհատոր սովորածավալ աշխատության մեջ. նույնպես չի կարողացել լուծել այս առեղծվածը. «Արդե՞ք սա Նազարեանցն էր: — Հարցնում է Լեոն և ապա պատասխանում. — Հաղիւ թէ նա լինէր, քանի որ Աբովեանցի մանկութեան բարեկամ Ստեփանոսը, ինչպէս երևում է, զինւորական դպրոցումն էր գտնուում, որովհետեւ Աբովեանցը գրում է. «Շառայելով ի կորպուսի իւրում ի Միխայիլով դամկէն, ոչ կարաց առ ժամայն ընկալնուլ զիս»: Եթէ ընդունենք, որ դպրոցը վերջացնելուց յետոյ Նազարեանցը գնացել էր Ռուսաստան, այն ժամանակ պէտք է անել մի այլ ենթադրութիւն — որ Դորպատ դնալուց առաջ նա վերադարձել է Թիֆլիս՝ իր մօրը տեսնելու համար, որովհետեւ նա շատ պարզ է ասում, թէ Դորպատ ճանապարհով է Թիֆլիսից 1832-ին»<sup>\*)</sup>:

Ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր, արժիանադեմ Երվանդ Շահազիզը, իր կազմած՝ Աբովյանի, լիակատար ու գիտականորեն մշակված, կենսագրականի մեջ անդրադառնալով այս խնդրին, տարաբախտաբար նույնպես հանգել է ոչ ճիշտ եզրակացության: «Մի խնդիր միայն, — գրում է նա, — այդ բոլորի մեջ մեզ համար, վավերականների պակասելու պատճառով, անլուծելի է մնում. այդ այն Ստեփանոսի խնդիրն է, որին Աբովյանը Դորպատ ուղնվորվելու ժամանակ հանդիպել է Պետերբուրգում և որ այդ ժամանակ ծառայելիս է եղել «ի կորպուսի իւրում ի Միխայիլով դամկէն»: Ի նկատի առնելով այն, որ նա մայրաքաղաքը ոտք կոխելուն պես, հենց առաջին օրը շտապել, գտել է նրան, և որ նա նրան կոչում է «Ստեփանոս սիրելին իմ որ բարեկամ ինձ ի մանկութենէ», պետք է կարծել, որ դա եղել է հենց նրա մտերիմ բարեկամ ու սիրելի դասընկեր Ստեփանոս Նազարյանցը:

«Բայց թե նա ի՞նչպես, ե՞րբ է եկած եղել Պետերբուրգ և ծառայության մտած և ե՞րբ է վերստին վերադարձել Թիֆլիս և այդուեղից էլ 1832 թվին ուղարկվել Դորպատ՝

<sup>\*)</sup> Ի՛հ, Ստեփանոս Նազարեանց, հատ. I, Թիֆլիս 1902 թ., էջ 61-62:

բժիշկ Սողոմոն Տեր-Ղուկասյանցի ծախքով, մեղ անհայտ է մնում»<sup>\*)</sup>:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ կենսագիրների պնդումներն ու ենթադրությունները հիմնավորված չեն հաստատուն փաստարկումներով, մինչդեռ նորահայտ նյութի-



Խաչատուր Աբովյան

րը պարզ ու որոշակի ապացուցում են, թե Ստ. Նազարյանը Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո Ռուսաստան չի գնացել. հեռուբար Աբովյանի կողմից հիշատակված Ստեփանոսն էլ Նազարյանը լինել չէր կարող, քանի որ այդ հիշված ժամանակամիջոցին նա ուսուցչություն էր անում Ներսիսյան դպրոցում և 1832 թվի հունիսի 15-ին էլ դիմում է ներկայացնում դպրոցի վարչության՝ խնդրելով ազատել իրեն դասավորությունից՝ Ռուսաստան մեկնելու համար:

Դպրոցական գործերի չգոյության հետևանքով, Նազարյանի գործունեության հատկապես նախադորպատյան շրջանի մի քանի տարիների վերաբերյալ, Ներսիսյան

<sup>\*)</sup> Երվանդ Շահազիզ, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, 1945 թ., Երևան, էջ 47-48:

դպրոցի գործերում տեղեկություններ գրեթե չեն պահպանվել:

Ինչպես հայտնի է, Կովկասի փոխարքա գրաֆ Պասկևիչ - Սրեանսկին 1828 թվի օգոստոսի 6-ին Ներսես արքեպիսկոպոսին արտոբեց Բեսարաբիա: Ներսեսը իր արտոբայում Քիշինև մեկնելուց դպրոցի կարևոր գործերի մի մասը տարավ իր հետ, իսկ մնացածը անհայտ է թե ում հանձնեց. սակայն փաստն այն է, որ այդ գործերը մինչ օրս էլ ղեռ չեն հայտնաբերված: Ներսեսին հաջորդեց Հովհաննես Կարբեցյան, որը ծայրահեղ աստիճանի փափաքամիավ լինելով հանդերձ հանդիսանում էր Ներսեսի ու նրա կողմնակիցների ուխտերիմ հակառակորդը:

Նա անխնայ կերպով ոչնչացնում էր անմենը, ինչ որ այս կամ այն շահով կապված էր դպրոցի հիմնադիր Ներսեսի անվան հետ: Կարբեցյու օրոք, 1831 թվի հունվարի 12-ին կազմվեց կոմիտեո վասն բախկարգութեան ուսումնարանին հայոց հիփիսիսը, որի գործունեություն մասին Աղեքսանդր Երեցյանը հետևյալն է գրում. «Կոմիտեոյի գոյութեան տեղի մինչև 1837 թնի փետրուարը և այս վեց տարուայ նորա գործունեութեան մասին մեզ շատ քիչ տեղեկութեաններ են հասած, որովհետև զպեւելուց յետոյ կոմիտեոը բոլորովին հրաժարեց յանձնել իր գրութեանները տեղւոյս հոգևոր վարչութեանը. բայց թէ այնուհետև ի՞նչ եղան նրա գործերը, մեզ անյարտ է»\*):

Բարեբախտաբար կոմիտեոյի հիշյալ տարիների անհայտ գործերից մի քանիսը գտնվեցին Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվի ֆոնդերում. ահավասիկ հենց այդ գործերումն էլ պահպանվել էին Ստ. Նազարյանի ուսուցիչ կարգվելու վերաբերյալ տեղեկությունները:

Արժվանից բաժանվելուց ուղիղ մի տարի հետո, 1827 թվի դեկտեմբերի 4-ին, Նազարյանն ավարտում է Ներսիսյան դպրոցի ուսման լիակատար դասընթացը. այնուհետև 1828 թվին մասնավոր կերպով նա ֆրանսերեն էր սովորում պրոֆեսոր Հակոբ Շահան Զրպետյանի մոտ: Աշակերտների, վերջինիս ձեռքով գրված, ցուցակի 6-րդ համարում կարդում ենք. «Ստեփան Ծսայեան Նազարեանց — յուսումն լաւ\*\*):

\* ) Ա. Երեցյանց, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց Հոգևոր Գործցի, հտ. Ա. Թիֆլիս 1898 թ., էջ 242:

\*\* ) Նույնը, էջ 170:

Նազարյանի այդ տարիների կյանքի մասին լեռն հետևյալն է գրում. «Թէ ի՞նչ էր անում Նազարեանցը իր ուսումն արարտելուց յետոյ — մեզ ճիշտ յայտնի չէ: Ներսիսեան դպրոցից դուրս գալուց յետոյ սկսում է նրա կեանքի մի շրջանը, որի մասին տեղեկութեաններ չեն մնացել: Քիտենք միայն, որ նա ուսումը արարտելուց յետոյ էլ հաճախում էր դպրոց՝ Շահան-Զրպետից ֆրանսերէն դասեր աննելու համար: ...Թէ ի՞նչ եղաւ այնուհետև, մինչև 1832 թեականը — հաստատ յայտնի չէ»):

Դպրոցն ավարտելուց հետո էլ Նազարյանը իր կապերը չի կտրել դպրոցի հետ: 1829 թվին պրոֆեսոր Պարրոտը, երբ Թիֆլիսի վրայով Ռուսաստան էր վերադառնում, տեսել է նրան դպրոցում և խորհուրդ տվել դնալ Դորպատ՝ ուսումը շարունակելու Այս մասին Ստ. Նազարյանի մտերիմ բարեկամներից մեկը՝ Հայնրիխ Վեոյերն իր հիշողությունների մեջ ասում է, թե «Ներսիսեան դպրոցում Նազարեանցին տեսանոյն պրոֆեսոր Պարրոտը, որ խորհուրդ տուեց նրան դնալ Դորպատ\*\*):

Նազարյանի կենսագիրներին հազիվ հաջողվել է նրա կյանքի տարեգրությունը հասցնել մինչև վերոհիշյալ տարիները. այնուհետև չկարողանալով այլևս շարունակել այդ տարեգրությունը, նրանք երեք տարվա մի ժամանակամիջոց լուսնայան են մատնել: Մեր հայտնաբերած արխիվային նյութերը, Ներսիսյան դպրոցի վարչության պաշտոնական փաստաթղթերը լինելով, պարզաբանում են Նազարյանի կենսագրության տակավին չլուսաբանված միջին կողմերը:

Առաջին և ուշագրավ փաստաթուղթը վերաբերում է 1830 թվի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներում Ներսիսյան դպրոցի կատարած ծախքերին և կրում է հետևյալ վերատուրությունը. —

Յուցակ ծախուց ուսումնարանին զորի 22-էն սեպտեմբերի 1830 ամի սկսույի գործ դնել ի ձեռն Առաքել Արարատեանցին:

Այս փաստաթղթից բերում ենք միայն ուսուցիչներին վերաբերող մասը.

Պարսից վարժապետի սեպտեմբերի և հոկտեմբերի ուճիկն ետու լԳ մանեթ Ա սպանի (33 ուճըլի 20 կոպեկ):

Ստեփան Նազարեանցի սեպտեմբերի և հոկտեմբերի ուճիկն ետու 20 մանեթ և 3

\* ) ԼԼ, Ստեփանոս Նազարեանց, հատոր I, 1902 թ. Թիֆլիս, էջ 53-54:

\*\* ) Նույնը, էջ 68:

մանէթ յաւելի վկայութիւնս Առաքելին (23 ուրբի):

Նկարիչ վարժապետի սեպտեմբերի և հոկտեմբերի ոտճիկն ետու 32 մանէթ Ա ապասի (Ա մանէթն ի Յարութիւն վարդապետէն էր ստացեալ) (33 ուրբի 20 կոպեկ):

Առաքել Արարատեանցի սեպտեմբերի և հոկտեմբերի ոտճիկն ետու 59 մանէթ:

Զիւլինսկիչ ռուս վարժապետի հոկտեմբերի ոտճիկն ետու 30 մանէթ:

Գաղղիացի վարժապետի սեպտեմբերի ոտճիկն ետու ԺԶ մանէթ Գ ապասի և 35 մանէթ ևս ի կողմանէ Յարութիւն վարդապետի, (զի սա ի կիսոյն յունիսի 1830 ամի գնացեալ ի ջերմուկան Կովկասայ և եկեալ ի սեպտեմբերի և շարունակեալ զուսումն իւր, պահանջէր ի մենջ գոտճիկ անցեալ ամսոցն՝ յամիսն 21 մանէթով, մենք այսմ անտիւզեակ զողով թե յաւելման ոտճիկի նորա, և թէ զլանալոյն նմա գնացեալ ամսոցն առ ի շոյշ, նորա առ մեզ. բազում անգամ դրեցաք առ Յարութիւն վարդապետն Այամ-դարեան մինչ էր չէմիածին բայց անաղան յոյժ ստացաք զպատասխանի ի նմանէ վասն հիւանդութեան նորա, վասնորոյ մեք առ ժամունի խաղաղել զտարածայնութիւն նորա տուաք զկէսն պահանջելեաց նորա 70 մանէթի՝ 35 մանէթ):\*)

Այս ցուցակից երևում է, որ Նազարյանը, բացի իր հիմնական աշխատավարձից, նաև երեք ուրբի հաճելիյալ գումար է ստացել Առաքել Արարատյանի վկայությամբ, բայց թե ի՞նչ կապակցությամբ, այդ մասին ոչինչ չի հիշատակված:

Ինչպես երևում է, դպրոցի վարչությունը այդ երեք ուրբին Նազարյանին պարտք է եղել և այդ պարտքն առաջացել է նախորդ ամիսների ընթացքում: Կարելի է ենթադրել, որ այդ պարտքը գոյացած լինի հունիսի 15-ից մինչև հուլիսի վերջերը ընկած ժամանակամիջոցում, երբ ֆրանսերեն լեզվի դասատուն հիվանդության պատճառով մեկնել էր Կովկասյան ջերմուկները բուժվելու համար. հարկանական է, որ վերջինիս բացակայության ժամանակ Նազարյանին հանձնված լինին նրա դասաժամերը, որի հետևանքով էլ գոյացած լինի այդ պարտքը:

Ներսիսյան դպրոցի պատմությունից հայտնի է, որ օգոստոս ամսին գրեթե պարավորունքներ չեն եղել. օգոստոսի 2-ին դպրոցի տնօրեն Հարություն վարդապետ Այամդարյանն հանկարծակի էջմիածին է կանչվել, իսկ նրա տեղը ժամանակավորա-

պես կարգվել է Ա. Արարատյանը:

Այդ օրերին Թիֆլիսում բնկվում է սարսափելի խոչերա և բնակչությունը խելահորույս և սարսափահար փախում է զեպի դանաղան վայրեր: Փակվում են հիմնարկությունները: Ներսիսյան դպրոցը ևս մեկ ամսով դադարեցնում է դասերը:

Սեպտեմբերի 20-ին, երբ վերսկսվում են պարապմունքները և կազմվում են ուսուցիչների աշխատավարձի ցուցակները, հաշվի են առնվում նաև ուսուցիչների նախորդ ամիսների պարտքերն ու պահանջները և ըստ այնմ կատարում վճարումները. այդպես են կատարվել օրինակ Նազարյանի և նկարչության ուսուցչի վճարումները, իսկ մեծ գումարի հասնող վճարումների համար նույնիսկ դեմել են էջմիածին, Հարություն վարդապետ Այամդարյանին՝ նրա համաձայնությունը ստանալու համար: Այսպիսի ցանակցություն վարվել է օրինակ ֆրանսերեն լեզվի դասատուի աշխատավարձի վրձարման կապակցությամբ:

Այս փաստաթղթի նշանակությունն ակնհերև է, որովհետև սա նախ՝ փրականդնում է Ստ. Նազարյանի կյանքի տարեգրության կտրված շղթայի այն օղակը, որը տակալին անհայտ էր մնացել նրա կենսագրիչներին, Հրկրորդ՝ ի հայտ է բերում Նազարյանի այդ շրջանի գործունեությունը և վերջապես՝ բացահայտում ու սնանկ է դարձնում այն հնթադրություններն, ըստ որի Աբովյանի կողմից հիշատակված Ստեփանոս համարվում էր Ստ. Նազարյանը:

Այսպիսով միանգամայն պարզվում է, որ 1830 թվին Նազարյանը ոչ թե Պետերբուրգումն է եղել, այլ Թիֆլիսում գտնվելով, որպես ուսուցիչ, պաշտոնավարել է Ներսիսյան դպրոցում՝ տարեկան 120 ուրբի աշխատավարձով: Այն տեղեկությունը, որ 1829 թվին Նազարյանը հաճախակի շփման մեջ էր գտնվել ու ամուր կապեր պահպանել դպրոցի հետ, մեզ կարծել է տալիս, թե այդ թվականի վերջերին նա ուսուցչական մի որոշ փորձաշրջան է անցել առանց որևէ վարձատրության: Այսպիսի սովորություն կար Ներսիսյան դպրոցում և ընդունված կարգ էր դարձել դպրոցի հոգաբարձության համար՝ փայլուն հառաջդիմություն ցուցաբերած այն շրջանավարտ սաների նկատմամբ, որոնք ձգտում ունեին դպրոցն ավարտելուց հետո մնալ ու աշխատել նույն տեղում: Այս կարգի ու ուշադրության արժանի փաստեր կան: Բերում ենք մի խրոնոլոգիք, որը կարևոր ու բնորոշ է հանդիսանում այդ ժամանակաշրջանի ուսուցչության վիճակի դրսևորման համար:

\*) ՀՄՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ № 2, ցուցակ 1-ին ա, գործ № 1, էջ 81

Խնդրագրի հեղինակն է 1832 թվի գերագանցիկ շրջանավարտ Ստեփանոս Մանդինյանցը, որը 1832 թվի փետրվարին կարգվում է հայոց լեզվի և գեղագրության ուսուցիչ, իսկ նազարյանի ազատվելուց հետո ստանձնում է նաև պատմության, աշխարհագրության և թվաբանության ավանդումը:

Շուրջ տասը ամիս առանց վարձատրության աշխատելուց հետո, նա հարկադրված է լինում այսպիսի մի սրտակեղեք խնդրագրով դիմելու «ուսումնարանի բարեկարգութեան ժողովին».—

«Գուրով վեցամեայ հասակաւ վախճանեցաւ հայրն իմ և ես մնացի անտէրունչ, ի ներքոյ բազում պարտուց և ի ճորտութեան, իսկ հանգուցեալ փեսայն իմ ետ ութամեայ հասակաւ ետու յուսումնարանն Հայոց, որում ուսայ ըստ կարողութեան ամս ութ:

Այլ դուք յանակնկալ պահու արարիք զիս ուսուցիչ Այբ և Բենից և վայելչագրութեան, ապա և պատմութեան, աշխարհագրութեան և թուաբանութեան, որոց ուսուցանեմ ամիսս տասն, ո՛չ ինչ շահեալ յուսումնարանէ բացի 10 մանէթից, զոր չէ՛ արժան յիշատակել, զի չէ՛ գին կօշկաց: Զի՞նչ արարից վարձապետութիւնս որ նօթի ծմ և ինձ ո՛չ տայ հաց, զի՞նչ ևս զիտութիւն, որ սովամահ կորչեմ և ո՛չ ոք կարկառէ նշխար ինչ հացի: Ընկերք իմ ամենեքեան են ի բաղդի և ես ստի ղ ղժբադդութիւն: Մշակն արժանի է վարձու իւրոյ, ասէ Քրիստոս, և ես ամիսս տասն անվարձ մնամ, անտրտունչ գումեքէ: Հաց ո՛չ ունիմ, դրամ չի՛ք և մուրանալ ամաչեմ: Ի վերջոյ խնդրեմ արտասուաթորմ աջօք, անտես շունել զաղաչանս իմ, զի ահա նոր ամիս մերձեալ է և ո՛չ ունիմ հանդերձ նոր, և տալ ըստ արժանւոյն գնել:

Մնամ յուսով՝ խոնարհ և յետին ծառայ ուսուցիչ Ստեփանոս Մանդինեանց  
 Ի 1832 ամի  
 դեկտեմ. 16  
 Ի Տփլիս\*)

Այս խնդրագրի հետևանքը լինում է միայն 20 ուրբու պարգևատրում. զպրոցի տեսչության գործերում պահպանվել է հետևյալ մակագրութիւնը. «Կոմիտետս ըստ զորութեան օրագրոյ յառաջադրէ Ջեզ տալ յաշակերտին կառավարիչ պաշտօնի ուսուցչին Ստեփանոսի Մանդինեանց քսան ուրբի արծաթ դրամ, որ պարգևէ կոմիտետն ծառայութեանց նորա»:

\*) ՀՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ № 2, ցուցակ 1-ին ա, գործ № 10, էջ 9:

Նրկրորդ փաստաթուղթը գրված է 1831 թվին, իր իսկ նազարյանի ձեռքով, և ցույց է տալիս, որ 1831 թվին նազարյանը շարունակել է դասավանդել Ներսիսյան դպրոցում. այս փաստաթղթի վերնագիրն է. «Յուցակ աշակերտաց երրորդ դասատան, որք ուսանին զաշխարհագրութիւն, զպատմութիւն և զթեթականութիւն ուսուց»:

Այդ դասատան աշակերտների թիվն էր 33. յուրաքանչյուր աշակերտի անվան դիմաց նշանակված է թե քանի անգամ է նա դասերից բացակայել հունիս ամսվա ընթացքում. ցուցակի տակ ստորագրված է. «Վարժապետ երրորդ դասատան Ստեփանոս նազարձանց»:

Կոմիտետն իր սեպտեմբերի 22-ի № 63 դրութիւյամբ գանձապահին գրում է. «Կոմիտետս՝ ըստ զորութեան օրագրոյ իւրոյ 21-ին ամսիս, ըստ արձեթիւղ առ Ջեզ զցուցակս զայս՝ առաջադրէ սկսեալ ի 1-էն սեպտեմբերիս իւրաքանչիւր ամսոյ տալ ըստ այնու ուսուցչաց, տպագրչի և պահապանաց զոտճիկս իւրեանց»: Յուցակը կրում է հետևյալ վերնագիրը. «Յուցակ ուսուցչաց ուսումնարանի Հայոց Տփլիսայ, տպագրչի և ալոց հանդերձ տարեկան ոտճկաւ իւրաքանչիւրոյն»: Յուցակի շրրորդ սլունակում գրված է. «ուսուցչին Ստեփան նազարեանին 240 ուրբի»:

Թե ի՞նչպես է աշխատել նազարյանը Ներսիսյան դպրոցում, այս մասին գոյություն ունի կոմիտետի 1831 թ. դեկտեմբերի 18-ի № 99 գրութիւնը, որի մեջ ասված է, որ հօգուտ դպրոցի նրա գործադրած ձիգերը հաջողութիւյամբ շին պակվում, զպրոցից հեռու բնակվելու հետևանքով: Կոմիտետը գտնում է, որ նազարյանի եռանդազին ու օգտակար աշխատանքը է՛լ ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է զպրոցին մոտիկ գտնվող և Ս.Նշան եկեղեցուն պատկանող սենյակը տրամադրել նրան. այս առթիվ կոմիտետը դիմում է Վրաստանի Հայոց Հոգևոր կառավարչութիւնը. «...ուսուցիչ ուսումնարանի մերոյ նազարեանցն եկեալ ի կոմիտետս յարտեաց նմայ՝ թէ՛ նա բնակելով Հաւաբար, ըստ պատճառի հեռաւորութեան այնր յուսումնարանէ՛ ոչինչ կերպիւ չկարէ գալ յուսումնարանն յիւրում ժամանակը՝ մանաւանդ յառաւօտեանն՝ ոչ հայելով յայն՝ թէ՛ ջանայ յամենայն սրտէ կատարել զկամս անդամոյս և պահպանել զօգուտ ուսանողացն ի նմանէ:

\*) ՀՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ № 2, ցուցակ 1-ին ա, գործ № 10, էջ 2-3:

«Արդ՝ կոմիտետս քաջ գիտելով զչերմե-  
 ոանդութիւն ուուցչին Նազարեանցի և ճըշ-  
 մարիտ համարելով, յիւրոյ կողմանէ, զառաջ  
 եղեալ նովաւ պատճառն բարօք համարեաց  
 դիմել այսր խնդրանօք առ հոգևոր կառավա-  
 րութիւնդ՝ զի դատարկեալ սենյակն գտանեալ  
 ի պատկանեալ սուրբ Նշան եկեղեցւոյ տան  
 հրամայեցէ ումն հարկն է տալ նմա վասն  
 բնակութեան, այնու միանգամայն, զի եթէ  
 կառավարութիւն հաճեցի նշանակել վասն  
 այնորիկ զվարձ ինչ, կոմիտետս պատրաստ



Ստեփանոս Նազարյան

է վճարիլ զայն, զի ուուցիչ Նազարեանցն  
 վասն օգտի ուուումնարանի ունիցի բնակա-  
 րան ինքեան ի մերձակայ տեղւոջ, թէպէտ,  
 կոմիտետս հաւաստի է՝ թէ կառավարու-  
 թիւնդ, որ միշտ այնքան մեծ իմն շերմեռան-  
 դութեամբ մասնակից լինի ամենայն առհա-  
 սարակ օգտից ուուումնարանին՝ ոչ կամեցի  
 այժմ աւելորդ ծախիւք սպառել զսակաւաթիւ  
 գումար այնորիկ»<sup>\*)</sup>։

Կոմիտետի դիմումին Հոգևոր կառավարչու-  
 թյունը, 1832 թ. հունվարի 25-ի իր № 47  
 դրության մեջ, տալիս է հետևյալ պատաս-  
 խանը.

«Առ ժողովն բարեկարգութեան ուուումնա-  
 րանի Հայոց Տփլիսայ

<sup>\*)</sup> ՀՄՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ  
 № 2, ցուցակ 1-ին ա, գործ № 9, էջ 39—40։

Ի 18-էն դեկտեմբերի անցեալ ամի՝ 99  
 թղթաթուղ խնդրէ ժողովդ ի կառավարութե-  
 նէս հրամայել ում հարկն է տալ Ստեփան-  
 նոս ուուցչին Նազարեանց ի բնակութիւն  
 զսենեակ սուրբ Նշան եկեղեցւոյ Հայոց, ուր  
 յառաջագոյնն նիստ ձեռք լինէր անդ, և այս՝  
 զի դիւրութիւն լիցի պարոն Նազարեանցին  
 մերձաւորութեամբ ուուումնարանին, որ Հաւ-  
 լաբար գնալով գալով, յառաւօտու և ի կէսա-  
 տուր, ո՛չ սակաւ նեղութիւն կրէ։

«Առ այդ պատիւ ունի կառավարութիւնս  
 պատասխանել, թե սենեակն այն յիշեալ ընդ  
 ներքնայարկի իւրոյ ստանայ ի տարէն վարձ՝  
 հարիւր մանէթ արծաթ յօգուտ եկեղեցւոյն և  
 քահանայից նորա, որոյ վասն և չէ՛ բարօք  
 զրիկել զեկեղեցին և զքահանայս նորա յայս-  
 պիսի օգտէ։ Այսու ամենայնիւ կառավարու-  
 թիւնս յարգելով զազգօգուտ ծառայութիւնս  
 պարոն Նազարյանցին, նշանակէ նմա զայլ  
 սենեակ ի վանս՝ ուր բնակէր Յովհաննէս  
 Անդրէասեան մատակարար վանացս, կից  
 սենեկի վարժապետ Ա. Արարատեանին և  
 յառաջարկէ ժողովուրդ փութով հոգացողու-  
 թիւն արարեալ, հրամայել պարոն Նազա-  
 րեանցին աեղափոխիլ յայս ասացեալ սե-  
 նեակս մինչև ի վերջ ամսոյս, զի ի սկիզբն  
 փետրուարի տացի այն սենեակ սուրբ Նշա-  
 նին ի վարձու, որում արդէն բազումք են  
 խնդրակք»։

Մինաս Արֆինկիսկպոս  
 Ստեփաննոս վարդապետ Արղուրյանց<sup>\*)</sup>

Այնուհետև մեզ անհայտ է մնում Նազար-  
 յանի նոր բնակարան ստանալու և այնտեղ  
 տեղափոխվելու պատմությունը։

Ստեփանոս Նազարյանի ներսխայան դպրո-  
 ցում պաշտոնավարելու վերջին օրերին վերա-  
 բերող մի փաստաթուղթ ևս պահպանվել է.  
 այդ դպրոցի տեսուչ Արզանովի 1832 թվի  
 հունիսի 16-ին կոմիտետին՝ ուղղված № 82  
 գրությունն է, որից պարզվում է, որ Նազար-  
 յանը հունիսի 15-ին դիմել է տեաչին, խընդ-  
 բելով ազատել իրձն ուուցչի պարտականու-  
 թյուններից՝ Ռուսաստան մեկնելու կապակ-  
 ցությամբ։ Այս փաստաթուղթը գրված է ռու-  
 սերեն. մենք ստորև բերում ենք նրա տեքստի  
 հայերեն լրիվ թարգմանությունը.—

Թիֆլիսի Հայոց դպրոցի կարգավորման  
 կոմիտետին

Միջին դասարանների աշխարհագրության  
 և պատմության ուուցիչ Նազարովը սույն

<sup>\*)</sup> ՀՄՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ  
 № 2, ցուցակ 1-ին ա, գործ № 9, էջ 35։

տարվա հունիսի 15-ին հաղորդեց ինձ, թե Ռուսաստան դնալու պատճառով, ինքը չպիտի կարողանա այլևս իր ծառայությունը դպրոցում շարունակել: Այս մասին հայտնելով կոմիտեիդ հս պարտք եմ համարում դրան ավելացնել, որ որովհետև հարկավոր էր հիշյալ առարկաները սովորեցնելու համար մի առանձին ուսուցիչ և մինչև արձակուրդը մնում էին շատ քիչ ուսման օրեր, ուստի պարոն նազարովի դասարանը հս ժամանակավորապես հանձնեցի ավագ աշակերտ Մանգինովին:

Այս գրությունը կոմիտեիդ ստացել է հունիսի 20-ին ու մակագրել. «Արձակել և նրա դասարանը ժամանակավորապես հանձնել ավագ աշակերտ Մանգինովին, իսկ Մանգինովի տեղը՝ Մոզուչարովին»: \*)

Այսպիսով, ուղիղ երկու տարի հետո միայն, Ստ. Նազարյանը մեկնում է Ռուսաստան, ընթանալով իր սիրելի ու մտերիմ դասընկեր Աբովյանի ընտրած ուղիով:

Այս նոր հայտաբերված վավերագրերի շնորհիվ էլ անտարակույս լուծվում է Ստ. Նազարյանի և Աբովյանի անվան հետ կապված «պետերբուրգյան» առեղծվածը, քանի որ հիշյալ ժամանակամիջոցում նազարյանը ծառայութլան մեջ էր գտնվում Ներսիսյան դպրոցում և ոչ-թե «ի Միխայիլով գամկէն»:

Արդ ի՞նչպես լուծել Աբովյանի «Հիշատակարան»-ում արված Ստեփանոս անվան հիշատակութլան խնդիրը: Նկատի ունենալով, որ Աբովյանը 1830 թվի օգոստոսի 25-ին ոտք դնելով Պետերբուրգ առաջին իսկ մոմենտին ձգտել է գտնել իր մանկութլան ընկերոջը՝ Ստեփանոսին և որին դտել է զինվորական ծառայութլան մեջ ու նրա հետ պայմանագրովելով երեկոյան հանդիպել ու միասին թատրոն դնացել, պետք է ենթադրել, որ Աբովյանի կողմից հիշատակված այս Ստեփանոսը նույնպես նրա սիրելի մանկական ընկերներից մեկն է հանդիսացել, բայց ոչ Ստեփանոս Նազարյանը:

Ի՞նչ հիմունքներ կան այս եզրակացութլան հանդեպ համար: Ներսիսյան դպրոցի պատմութլան մեջ պահպանվել են երկու փաստաթուղթ, որոնք ուղղակի վերաբերում են այս խնդրին ու լույս են սփռում Աբովյանի Թիֆլիսի ընկերական շրջանի վրա: Առաջին փաստաթուղթը երրորդ վերին դասատան աշակերտների ցուցակն է. «Անտնք, հայրանունք և մականունք աշակերտաց մայր

դպրոցիս հայոց երրորդ վերին դասատան»: Այս ցուցակի երրորդ համարում կարդում ենք. «Յաչատուր Աւետիքեան Աբովեանց», իսկ ութերորդում՝ «Ստեփան Համբարձումեան Գասպարեանց»): Ուշագրավ է, որ այդ ցուցակում Նազարյանը գրանցված չէ: Երկրորդ փաստաթուղթը, 1826 թվի փետրվարի 24-ին դպրոցն ավարտած առաջին 18 շրջանավարտների ցուցակն է, որտեղ չորրորդ համարում գրանցված է. «Յաչատուր Աւետիքեան Աբովեանց», 6-րդում՝ «Ստեփաննոս Համբարձումեան Գասպարեանց», իսկ 7-րդում՝ «Ստեփաննոս Ծալիան Նազարեանց»): Այնուհետև հայտնի է, որ այդ 18 շրջանավարտներից միայն Ը-ը վկայագիր ստանալով թողնում են դպրոցը, որոնք թվում են յաչատուր Աբովյանը և Ստեփանոս Գասպարյանը: Մնացած շրջանավարտներից Անուքել Արարատյանն անմիջապես ուսուցիչ է նշանակվում նույն դպրոցում, իսկ Ստ. Նազարյանը ու մյուս 10 շրջանավարտները համաձայնում են մնալ և ուսումը շարունակել նոր բացվելիք 4-րդ և 5-րդ դասարաններում: Այստեղից երևում է, որ Աբովյանն իր մանկական-աշակերտական տարիներին, սկսած դեռ Թիֆլիսի Տափի թաղի Պողոս վարդապետի վարժարանից, ունեցել է ոչ թե մեկ, այլ երկու «Ստեփանոս-սիրելի»: Ինկը դա Ստեփաննոս Նազարյանն է, որ շարունակելով իր ուսումը՝ Ներսիսյան դպրոցում, ավարտել ու հետո էլ ուսուցիչ է կորզվի նույն տեղում, իսկ մյուսը Ստեփանոս Գասպարյանն է, որը վկայագիր ստանալով Ռուսաստան է մեկնել բախտ որոնելու և, ինչպես իրևում է Աբովյանի հիշատակութլանց, Նյու-հեյքս հաջողվել է զինվորական ծառայութլան մտնել «ի կորպուտի իւրում ի Միխայիլով գամկէն»:

Ներսիսյան դպրոցի պատմագիր Ա. Արիջյանը, մեկ առ մեկ թվելով առաջին շրջանավարտների մատուցած ծառայութլանները, Գասպարյանի մասին գրում է. «Մեզ անծանօթ»): Հարկավ այն ժամանակվա Պետերբուրգում, մի կողմից հայ տարրի գրեթե չգոյութլան և մյուս կողմից խիստ մեկուսացված արքունական զինվորային՝ ծառայութլան մեջ գտնվելու հանգամանքներից, կարող էին Գասպարյանի անունը ընդմիջոտ անծանոթ դարձնել հայ հասարակական շրջաններին, մինչդեռ Աբովյանը ջերմ ընկերասեր լինելով, ան-

\*) Ա. Երիցեանց, Պատմութլան 75-ամյա զոյութլան Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի հա. Ա, 1898 թ. Թիֆլիս, էջ 26:  
\*\*) Նույնը էջ 115:

\*) ՀՄՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆոնդ № 2, ցուցակ 1-ին ա, գործ № 10, էջ 13:

հավանական չէ, որ այս կամ այն կերպ տեղ-  
յակ եղած լինի իր մանկության ընկերոջ  
կյանքին ու Պետերբուրգ գալով նրան այցե-  
լած:

Ահավասիկ այն նոր փաստերը, որոնք լու-  
ծում են Խ. Աբովյանի և Ստ. Նազարյանի  
կենսագրության շուրջն ստեղծված առեղծ-  
վածը:

Երկու խոսք էլ այն մասին, թե հայ գրա-  
կանության պատմության մեջ ինչպիսի տե-  
ղեկություններ են պահպանվել ներսիսյան  
դպրոցում Նազարյանի ուսուցիչ կարգվելու  
մասին:

Այս մասին մինչ այսօր մեզ հայտնի է եղել  
միայն մի փաստաթուղթ, որն առաջին ան-  
գամ տպագրվել է 1905 թվին «Լույս» հանդե-  
սում՝ գրաբար լեզվով ու առանց ծանոթա-  
գրությունների: Այդ փաստաթուղթը ուղիղ  
35 տարի անուշադրության մատնվելուց հետո  
երկրորդ անգամ լույս է բնծայվել «Դիվան  
Սաչառուր Աբովյանի» դոկումենտալ աշխա-  
տության մեջ:

«Դիվան Խ. Աբովյանի» աշխատության  
բեղմնավոր ու բազմաշխատ հեղինակ Եր-  
վանդ Շահազիզը սույն փաստաթուղթը գրա-  
բարից աշխարհարարի վերածելով կցել էր  
նրան անհրաժեշտ ծանոթագրություններ ու  
տվել մանրամասն մեկնաբանություններ.  
սակայն ձեռքի աակ հավաստի վավերագրեր  
չունենալով հանգել էր խնդրի ոչ ճիշտ լուծ-  
ման, որի մասին մենք իր տեղում արդեն հի-  
շտատակեցինք:

«Դիվան Խ. Աբովյանի» աշխատության մեջ  
տպագրված փաստաթուղթը Հարություն վար-  
դապետ Ալամդարյանի 1832 թվի հունիսի  
17-ին Քիշինեցի Աբովյանին գրած նամակն  
է: Նամակում Նազարյանի մասին կա հետե-  
յալ երկտողը. «Քո եղբայր Ստեփաննոս Նա-  
զարհանցն այժմ Տիֆլիսում շատ առաջադեմ  
վարդանալով հայերեն, ռուսերեն, պարսկե-  
րեն ու ֆրանսերեն լեզուների և նամանավանդ  
ընտիր բանաստեղծության մեջ, ուսուցչու-  
թյուն է անում մեր դպրոցում (Ներսիսյան  
դպրոց) և նրա տարեկան ուժևոր գումարը  
հասնում է 300 արծաթ ռուբլու, այն է՝ 1200  
ռուբլի թղթագրամ, և թվում է, թե չի հոժարի  
գալ քաղաքը և նոր բախտ որոնել: Գրիր

նրան դու ինքդ, գուցե նա կհամոզվի քո հոր-  
դորանքով. ճանապարհածախսի համար նա  
և ոչ որի նպաստի կարոտ չէ, և այլն»:

Ալամդարյանի հաղորդած տեղեկությունը  
Նազարյանի մասին հետո է պաշտոնական  
լինելուց, որոհետև ինքը Ալամդարյանը երկու  
տարի առաջ Թիֆլիսից դուրս գալով այլևս  
չէր վերադարձել, հետևաբար և նրա գրածը  
կարելի է հավաստի չհամարել: Մյուս կողմից  
նա Նազարյանի վարած պաշտոնի մասին խո-  
սում է ներկայի, այսինքն 1832 թվի, առու-  
մով, իսկ ոչ մի խոսք չի ասում դրան նախոր-  
դող տարիներում նրա վարած պաշտոնի մա-  
սին: Այսպիսով այս նամակը չէր ժխտում այն  
ենթադրությունը, թե Ստեփանոսը կարող էր  
Պետերբուրգում իր ծառայությունը թողած  
լինել և Թիֆլիս վերադարձած ու ուսուցչական  
պաշտոն ստանձնած:

Նոր հայտարարված փաստաթղթերից երե-  
կում է, որ Ալամդարյանի նամակում անճշը-  
տություններ կան Նազարյանի ստացած աշ-  
խատավարձի քանակի, նրա նյութական ա-  
պահով վիճակում լինելու և նոր բախտ որո-  
նելու ձգտման բացակայության մասին: Ըստ  
նոր փաստաթղթերի, նախքան Ալամդարյանի  
սույն նամակը գրելը, Նազարյանն արդեն  
թողել էր իր պաշտոնը և նոր բախտ որոնելու  
համար հրաժարագիր ներկայացրել Ներսիս-  
յան դպրոցի տեսչությանը, իսկ վերջինս էլ  
հարգելով նրա խնդիրը՝ ազատել էր ուսուցչի  
պարտականություններից:

Ի վերջո պետք է խոստովանել, որ «Դիվան  
Խ. Աբովյանի» աշխատության մեջ զեռեղ-  
ված Ալամդարյանի վերոհիշյալ երկտողը և  
հատկապես նրան կցված ծանոթագրությունն  
էին, որ առիթ ծառայեցին իմ որոնումներին  
Պետական կենտրոնական Արխիվում՝ Ներ-  
սիսյան դպրոցում Նազարյանի ուսուցիչ  
կարգվելու հանգամանքները լուսարանող  
պաշտոնական հավաստի վավերագրեր գրու-  
նելու ուղղությամբ. բարեբախտաբար իմ ո-  
րոնումներն ավարտվեցին անսպասելի ար-  
դյունքներով, ինձ հաջողվեց երևան հանել  
այն ցանկալի փաստաթղթերը, որոնց հայ-  
տարեհրմանը ես հետամուտ էի:

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

